

ջարար կ'ըլլայ : Պատուհանները լայն պիտի ըլլան որ լցոն ու տաքութիւնը աղէկ ներս զարնէ . իսկ սենեակներէն դուրս եղած սրահը դէպ 'ի արևմտեան հիւսային կողմը պիտի ըլլայ , որպէս զի ան կողմէն փշած հովերուն դէմ պաշտպանութիւն ըլլայ : Պատերը քարէ պիտի ըլլան ու հաստ , մանաւանդ տանը ետևի կողմը . և ան կողմի պատուհանները աւելի նեղ : Օ գուշանալու է որ տանը քովվերը շատ ծառ չտրնկուի . վասն զի թէպէտ և ցորեկը թըմուածին կազ կուտան ծառերը , բայց զիշերն ալ խիստ շատ ածխային թթու կազ կ'արտաշնչեն . անկէց 'ի զատ խոնաւութիւն մըն ալ կը ձգեն որ շատ խասակար է : Ուրիշ կողմնանէ , որովհետեւ տանը ծառաստանի մը քովվ ըլլալը շատ առողջարար բան է , անոր համար տանն ու անտառին մէջ ընդարձակ դաշտ մը ձգելու է որպէս զի օդը դիւրաւ կարենայ փոխուիլ . և ծառերը դաշտէն անդին տնկուած ըլլալով՝ մըթնոլորտին մէջ կենդանարար օդ մը կը պահէն , որ անտեղի բնակիներուն առողջութեանը մեծ պատճառ կ'ըլլայ : Վասպիսի տան մը ամենէն գեղեցիկ զարդարանքները պիտի ըլլան մաքրութիւն , պարզութիւն ու առաքինութիւն . և բոլորովին աքսորուած պիտի ըլլան անկէց զեղխութիւն , հարստութիւն , աւելորդ զարդեր , մոլութիներ ու ձանձրանալի , հացկատակ և շողոքորթ մարդիկ , :

Ի՞սյօ որովհետեւ ամէն անդամ կարելի բան չէ այսպիսի կերպով շինուած տուն գտնել բնակելու համար , նայելու է որ ընտրած բնակարանիդ մէջ աս աղէկութիւններուն որչափ կարելի է մեծ մասը գտնուի : Վմէն բանէն աւելի նոր շինուած կամ գեռ նոր ներկուած տան մէջ բնակելու չէ :

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՄՀԱԳՐՈՒ ԻՒՆ

Երիբեն Նրա եղած զանազան բ ահան դոփութիւնները :

ՅԱՅՑՆԻ է որ ջրհեղեղի ատենը երկիրա բոլոր ջրի տակ ծածկ ուած ըլլալով շատ մեծ փոփոխութիւն ներ կրեր է , մանաւանդ թէ որ ընդուն ինք նաև իմաստնոց այն կարծիքը՝ թէ ջրհեղեղին ատեն երկրիս առանցքը ի , առաջին ուղղութենէն խստորեր է ու հիմակուան դիրքն առեր է : Վայ մեծ փոփոխութեանս վրայ հիմայ ՛ոս չենք ուղեր խօսիլ , հապա միայն այն փոփոխութեանց վրայ քանի մը բան ըսենք՝ որ այլ և այլ ժամանակ հանդիպեր են երկրիս զանազան կողմերը , որոնք նաև պատմութեան ալ նիւթ եղած են :

Վայ փոփոխութիւններն են

Ա . Վ ատ տեղեր ջուրը ցամաքին տեղը բռներ է , ցամաքն ալ ջրին տեղը :

Բ . Վանի մը գաւառներ անբնակ մնացեր են , ոմանք ալ ընդհակառակն բնակելի եղեր են :

Գ . Վնապատներ պտղաբեր երկիր դարձեր են , և առաջուց պտղաբեր եղող երկիրներ անապատացեր են :

Դ . Վ անազան գաւառաց հողը այլ և այլ ատեն զանազան տեսակ բոյսեր բուսուցեր է :

Ե . Վայ այլ գաւառներ այլ և այլ ժամանակ զանազան տեսակ կենդանիք ունեցեր են :

Զ . Վ աւառներ եղեր են որ ատեն մը ցուրտ էին , և վերջը տաք գաւառներ դարձեր են . նոյնպէս փոխագարձ :

Է . Վնառողջ գաւառներ առողջարար եղեր են , առողջարարները՝ խասակար :

Վայ մեծամեծ փոփոխութիւնները երբեմն բնութեան ձեռքովը եղած են հեղեղներով , երկրաշարժութեամբ , հրաբուխներով և այն . երբեմն ալ մարդուս ձեռքով : Վարդուս հանձարը

կարող է հրամայել Ճահիճի մը որ ջրեւը մասնաւոր տեղ մը ամփոփէ , և ան ալ կը հնազանդի : Ինքը թերակղզւոյ մը կ'ըսէ . դարձիր կղզի եղիք , և կ'ըւլայ . ժայռի մը՝ թէ ծաղկիրներ , որ թեր , ծառեր բուցուր , և ժայռը կը բուսցընէ . գետի մը , թէ ալ մի սառիք , և գետը կը հնազանդի . վասն զի հին անտառները կործանելով , երկիրը մշակելով , կլիման աւելի կը քաղցրանայ , և ձմեռները այնպէս սաստիկ չեն ըլլար , ինչպէս որ առաջ էին : Եւ երկիրս այն շափ կարող է , որչափ որ մարդ կ'ուղէ որ կարող ըլլայ :

Ա . Շառ ուղեր՝ ջուրը յանագին ուղը դրաւեր է : — Ալ տեսնենք Պաղեստինու մէջ Ուեւեալ ծովը . հնա առաջ գեղեցիկ լայն հովիտ մը կար բազմամարդ քաղաքներով , հօտերով և երամակներով , և ամենայն ընտիր բերքով ծածկուած , կուած , մէկ յանկարծական յեղափոխութիւն մը ամէն բան աւրեց , հիմա հնա ուրիշ բան չի տեսնուիր , բայց սոսկալի Ճահիճ մը , ուսկից ամէնքը հեռու կը փախցին :

Խջկու հարիւր տարի առաջ Վմերիկայի մէջ Լիմա հարուստ և բազմամարդ քաղաք մ'էր , բոլոր Ճամբանները արծըթէ թիթեղով յատակած ընդարձակ ծովեզրի մը վրայ տարածուած : Յանկարծական գետնաշարժ մը մղեց ծովուն ալիքը այս քաղքիս վրայ , ուսկից բաւական ալ հեռու էր . այսօրուան օրս նաւերը կը ծփան այն տեղը՝ ուր որ ատեն մը հոյակապ աշտարակներ , տաճարներ և պալատներ կանգուն կեցած էին :

Խուդանուտ և Ֆիրզիա իրենց ափանցը վրայ մեծ քաղաքներ ունեին , այսօրուան օրս ծովը և ոչ նշան մը թողուցեր է իր աւարներուն :

Հիները մեզի յիշատակ մը թողուցին մէկ մեծ երկրի մը որ կը տարածուեր Վտլանտեան ովլիանոսին մէջ , Վմերիկէն դէպ ՚ի Վմերիկա , և ասոր մնացորդներն են թերեւս այն կղզիները , որ ասդիս անդին կը հանդիպին այն ընդ-

արձակութեան մէջ : Ծառվը Վտլանտիային տեղը բռնեց :

Վայապէս նաև ծովը մտած է Ճ'պիլզէռոայի և Անդատէի մէջ , Ուէճ Ճիոյի և Ուեսախնայի , Քալէի և Տուվրի , վասն զի յայտնի կ'երևնայ որ Ապանիան Վմիրիկէին հետ կպած էր , Վտալիան Վիկիլիային հետ , Պաղղիան Վնդղիային հետ , այսպէս էր նաև Խւրէան Վտտիկէին հետ , Ափարոսը Վսորոսց երկրին , Առումատրան Վալակկային : Եւ աւելի մօտ ժամանակի մէջ հանդիպածները յիշենք . ուր են հիմայ Խստիտուանդիա և ուրիշ կղզիները , որ Վորվեկիայի և Խոլանտային քովերը տարածուած էին դէպ ՚ի հիւսիսային Վմերիկա , զորոնք տեսան և ստորագրեցին ալիքը քաղաքավար և բազմամարդ երկիրներ՝ Ուենետկեցի Ծանոյ ըսուած անուսնի աշխարհագիր նաւողները :

Վայրը այս բաներս բնութիւնը ըրած է , վասն զի մարդիկ թէպէտ և կարենային ալ չէին փոխեր յամաքը ջրի հետ , վասն զի մարդոս աւելի բարիք կը հաներկրէս քան թէ ջրէն :

Վայց մարդիկ ալ կը սիրեն ջրանցքներ շնուր : Վայպէս կը կարդանք որ Վզիալտոսի թագաւոր մը Առեզին պարանոցը կտրել ուզեց , որպէս զի ծովուամբայ բացուի Կարմիր ծովէն դէպ ՚ի Վիջերկրական , որ այն ատենը Վմիրիկէն կղզի մը կը ձեւանար : Պաղղիայի թագաւոր մը Լանկըտոքի երեւելի ջրանցքը փորել տալով Հիւսիսային ծովը հաղորդեց Ուիջերկրականին հետ և կղզի մը ձեւացուց բոլոր այն գաւառը որ կը տարածուի Պաղղիոյ , Ապանիոյ և Փորթուկալի միջոցը : Այսն բանը կ'ըլլայ թէ որ կտրուի Բանամայի պարանոցն ալ Վմերիկայի մէջն , վասն զի այն ատեն Վտլանտեան ովլիանոսը և Խաղղական ծովը մէկմէկու հետ կը հաղորդուին . նոյնպէս նաև բոլոր հարաւային Խւրոպան կղզի մը կը դառնայ , թէ որ Վանուբը Հուենոս գետին հետ ջրանցքով մը միացուի : Ուրիշ այլ և այլ ջրի տակ թաղուած երկիրներէն կէս մը բնութեան և կէս մ'ալ թերեւս մարդ-

կանց ձեռքով, յիշենք Ա ենետիկի ցամաքին եզելքը, ուր որ հիմա հազիւ կ'երևնան հին Ա ալամոքին, Հերակլիային և Քեզօլէին տեղերը, և ուրիշ քաղաքներու, որ ծովեզրեայ Ա ենետիկի պատմութեան մէջ անուանի եղածէին :

Բ. (Օ անաղան բեղուանք ցամահը Զբին բեղը բաներ է : — Ա տորին Խգիալտոսը որ Տէլդա ալ կ'ըսուի, ատեն մը Ա իշերկրական ծովուն մէկ մասն էր. Վեղալը իր տղմովը կամաց կամաց երկիրը բարձրացուց, և ետքը աշխարհքիս ամենէն գեղեցիկ երկիրներէն մէկն եղաւ : Ա քիակեղագոսին կղզիներէն շատին ձեացած ատենը յայտնի է. ինչպէս հին ատեն Հոոդոս և Դեղոս, իսկ Ա անթուրին կղզին ալ մեզմէքիչ առաջ ձեւացաւ :

Հուանտայի մեծ մասը առջի բերան ծով և ճահիճէր . համբերող Ճարտարամիտ մարդիկ սիրտ ըրին զանիկայ բնակելու յարմար գաւառ մը ընել, Ծրանցքներու և թումբերու ձեռքով, որոնք հիմա Խգիապտօսի ջրանցքներուն պէս զարմանալի են : Ա յապէս ահա այն տեղը՝ ուր որ ատեն մը ձկնորսութիւն կ'ըլլար և մարդիկ նաւերով կամ լաստով կ'երթային, այսօրուան օրս անկէ խոտի և ցորենի առատ հունձք կը քաղուի, և կառքով կը քալուի : Խոսք կայ այս կերպով ցամքեցընելու նաև Հարլէմ ըսուած ծովակն ալ. թէ որ այս բանս 'ի գործ դրուի, նաւավարաց և ձկնորսաց մեծ մասը պէտք է որ պարտիզան և երկրագործ ըլլան, որ պէս զի անօթութենէ չմեռնին :

Գ. Ա ան գաւառներ որ անբնահ հնացեր էն. ռմանսք բնակէլի եղէր էն, ռմանս ալ ընդհակառակն անբնակէլի եղէր էն : — Ա յըոր մարդիկ առջի անգամ գաւառ մը կու գան, կ'ըսուի թէ այն գաւառը բնակելի կ'ըլլայ : Ունէ որ գաւառի մը մէջ արդէն

<sup>1</sup> Հարլէմի ծովակը ցամքեցընելուն վրայ եղած հարկաւոր տեղեկութիւնները կրնան գանել իւղնդրողք Ա եննայի մեծարդոյ Միթթարեանց Եսրութագրին առաջիկայ տարւոյս 14 թուոյն մէջ :

կան մարդիկ, և դեռ ուրիշներ ալ կու գան բնակելու հոն, կ'ըսուի թէ այս նորեկները մէկալ գաւառներէն կը փոխադրուին կը գաղթին : Ունէ որ մարդիկ գաւառէ մը բաժնուին, կամ թէ գաւառի մը մէջ աւելի մեռնող ըլլայ քան թէ ծնանող, այն գաւառը կ'ըսուի սակաւաբնակ . իսկ անբնակ կ'ըսուի այն գաւառը՝ ուր որ մարդ չկայ, և թէ որ մէկը հոն համանի, կ'ըսուի թէ այն մարդը Ուօպէնսոն մըն է : Ա երջապէս գաւառ մը ուր մարդիկ չեն կրնար կենալ ուտելու բան ըրլալուն պատճառաւը, կ'ըսուի անապատ :

Վախ և առաջ բոլոր աշխարհս անբնակ էր : Ա երջը այն գաւառը բնակչօք լեցուեցաւ, ուր որ նախ ապրեցաւ մարդկանց զցով : Ա յոնց որդիքը բազմացան ծննդեամք . բայց երկայն ժամանակ մէկմէկու մօտ կ'ապրէին ինչուան ատեն մը եկաւ, որ կամ ալ չկը տան այնչափ տեղ որչափ որ իրենց պիտոյիցը համար հարկաւոր է, կամ իրենց մէջը կոփւ ունենալով, բաժնուեցան մէկմէկէ . որը մէկ կողմն գնաց, որը մէկալ կողմն : Ա յիան առջի բազմամարդ երկիրը եղաւ, վերջը Խրոպան և Վիրիկէն :

Ա արգուս հետաքրքրութիւր կը շարժի գիտնալու թէ ինչպէս կրնայ ըլլալոր քանի մը ընտանիք այսպէս հեռաւոր տեղուանք փոխադրուին բնակելու համար . ինչպէս կրցան անցնիլ ահագին և մրրկալից ծովեր, այնպիսի ժամանակ որ դեռ ծովով Ճամբայ ընելը չէր սովորած, և ընդին ու անապահով նաւակներէ 'ի զատ ուրիշ բան չէին կրնար ունենալ, կամ ինչպէս կրցան անցնիլ խիտ անսաւուները, արագահոս գետերը, ընդարձակ Ճահիճները և անմատոյց լեռները, թէ որ ուզենք ենթագրել թէ ցամաքով այն Ճամբորդութիւնները եղած ըլլան : Ա երջապէս ինչպէս կրնայ ըլլալոր, որ շատ մը ընտանիք ընտրած ըլլան իրենց համար անքեր և գառն կիմաներ, այնպիսի ժամանակ որ երկիրը դեռ գատարկ և երջանիկ գաւառներ կ'ընծայէր մարդկանց :

Ի՞այց ասոնցմէ աւելի մարդուս հետաքրքրութիւնը կը շարժի իմանալութէ արդեօք ինչպէս բնակչօք լեցուեցան Ամերիկան և Հարաւային Հընդկաց կղզիները :

(ի) որ մարդիկ բաւական ժամանակ երկրի մը մէջ բնակելէն ետքը, զայն թողուն, և միակերպ անցնին մէկ տեղէ մը մէկալ տեղ, կամ թէ տերեւալից ծառերու տակ ապրին, այրերու մէջ կամ վրաններու տակ, ինչպէս կ'ընեն Տննկոլները, Պ ալմուխները և Արաբացւոցմէ շատը, Ատամառական կ'ըսուին : Խակ թէ որ մնան այն երկրին մէջ ուր որ եկած են, թէ որ տներ շինեն, որոնք վրաններուն պէս չեն կրնար տեղէ տեղ փոխադրել. ասոնք բնակեալ կ'ըսուին : Այս ատեն իրենց տները քաղաքներ, գեղեր կը կազմեն, և քանի որ շատնան՝ այնչափ աւելի քաղաքական կ'ըլլան, նոյնպէս իրենց քաղաքները և գեղերն ալ կը կարգաւորուին և կը գեղեցկանան :

Այս արդիկ կը հասնին երկիր մը, ուր որ ուրիշ մարդիկ չըլլան, բնականապէս իրենց առջի հոգը կ'ըլլայ իրենց մնունդը գտնալը :

Այս բանիս համար չորս հնարք գտեր են :

Ա. Ոմանք միայն բոյսերով կ'ապրին՝ որոնք ինքնիրեն կը բումնին, ինչպէս են արմատ, շագանակ, խնձոր, կեռաս, քոքոյի ընկոյզ և ուրիշ ասոնց նման բոյսեր. բայց այսպիսի օգտակար տունկեր ամէն տեղ չկան, և ոչ իսկ ապահովապէս ամէն եղանակի մէջ :

Բ. Ոմանք կ'որսան վայրի կենդանիք նապաստակ, թռչուն, կրիայ, ձուկ և այլն, և այն է իրենց կերակուրը : Այս կայ կը ցուցընէ որ անոնք ձկնորս և որսորդ կ'ըլլան :

Գ. Ոմանք ալ անասուններ կը բռնեն, բայց չեն մորթեր, հապա կ'ընտանեցնեն, և անոնցմէ հօտեր, նախիրներ կը կազմեն, անոնց կաթովը կ'ապրին, և միակերպ տեղ կը փոխին, արածելու յարմար տեղ մը ունենալու համար : Այսպէս Արաբացին իրեն ուղտերովը

կ'ապրի, Առղողը իր ձիերովը, Ա ափոնիացին իրեն եղջերուներովը :

Դ. Խակ ուրիշներն ալ երկրագործ կ'ըլլան, այսինքն խնամքով կը տնկեն խոտեր, արմասներ կամ պտղատու ծառեր, որ առաջ ասղիս անդին ինքնիրենց կ'ածէին, կը մշակեն նաև ցորեն, մըսրացորեն, գետնախնձոր, կաղամբ և այն, իրենց մնունդ հարելու համար :

Ասրեկիրթ ազգեր այս չորս տեսակ ապրելու ոչն ալ իրարու հետ կը միացընեն. Վայրի պտուղները կը քաղեն, ուր տեղ որ մշակութիւնը կը թողու, որսի և ձկնորսութեան կ'երթան, ոչխարաց և այծուց հօտեր կը պահէն, եզներ, կովեր, խոզեր, ձիեր կ'ունենան, և այլն. կը մշակեն ամենայն տեսակ բանջարներ, ընդեղէններ և ցորեն. և այս ամենայն բանը կ'ընեն անօթութեան դէմն առնելու համար :

Հիմա գրեթէ աշխարհքիս ամէն կողմը բնակութիւն կայ, բայց քանի մը գաւառ շատ ուշ բնակելի եղան : Խոր հարիւր տարիէն աւելի չէ, քանի որ Խալանտան բնակուեցաւ : Այսկու հարիւր յիսուն տարի է որ Փորդոքէները Վզորեան կղզիներուն մէջ թէպէտ և բազէներ գտան, բայց մարդ չգտան :

Այսկրի մը բազմամարդութիւնը կը բնայ ժամանակով փոխուիլ : Այսօրուան օրս քիչ մարդ կայ Շ ուետի լայնարձակ երկրին մէջ, և շատ աւելի կայ Հոլմանափոյ պղտի երկրին մէջ . Ազիստոսի և Վաղդէաստանի մէջ իրեք հազար տարի առաջ բնակչաց թիւը շատ մեծ էր, Վերմանիոյ մէջ ամենաքիչ . այսօրուան օրս ընդհակառակն է : Բալը հիւսիսային Ամերիկայի արևելեան կողմը երկու հարիւր տարի առաջ ուրիշ բան չէր, բայց Եթէ ընդարձակածաւալ և խիտ անտառ մը ուր որ շատ վայրի կենդանիներ կը գտնուեին, և քիչ մ'ալ բարբարոս մարդիկ . Հիմա այն ահապին կողմը գրեթէ լի է բնակչօք, գեղերով, գեղեցիկ գեղի տուներով, և սքանչելի քաղաքներով :